Ալեքսանդր Ծիրվանզադե

Մարդը անասունի մեջ

Երբեք նա այնչափ հուզված չէր եղել, որչափ այդ օրը, նույնիսկ այն չարաբախտ պահին, երբ մարդիկ եկան հանկարծ, դուրս կորզեցին նրան երջանկության գրկից և ձգեցին զրկանքի, տառապանքների խավար աշխարհը: Անհայտ, անծանոթ մարդիկ, որոնց նմանը նա երբեք չէր տեսել ու չէր երևակայել:

Նստած էր նա Պարիզի սրճարաններից մեկում, որ այցելում էր ամեն օր իր հայրենակիցների ու բախտակիցների հետ: Այստեղ միաժամանակ, ավա՜ղ, շատ զվարճալի ժամեր էր անցուցել՝ անձնատուր հյուրիներին:

Մենակ էր, սովորականից կանուխ էր եկել, դիտմամբ: Ուզում էր գեթ մի ժամ լինել առանձին, ինքն իր հետ, հեռու թե՛ ընտանիքից և թե՛ իր բախտակիցներից: Այդ մռայլ, թթված դեմքերից, որոնք վաղուց էին նրան ձանձրացրել իրենց անվերջ անեծքներով և մանավանդ հազար անգամ կրկնված հարցերով:

Ե՞րբ պիտի այս բոլորը վերջանա, ե՞րբ պիտի վերադառնանք մեր տուն ու տեղը, ո՞վ կարող է մեզ օգնել և այլն, և այլն...

Այժմ նա զգում էր, որ այլևս չկա դարձ դեպի անցյալ կարգ ու կանոնները, որ ամեն ինչ կորած վերջացած է առմիշտ: Մի բան, որը եթե գիտենար երկու տարի առաջ, կարող էր կաթվածահար լինել կամ խելագարվել:

Երեկ նա վաճառեց իր կնոջ վերջին ադամանդը նշանադրության մատանին: Խեղճ կին, ինչպե՜ս հեկեկաց, տալով այդ նվիրական իրը մարդուն, որ տանե վաճառե առաջին պատահողին՝ հանուն զավակների «ժամանակավոր

ապրուստի»: Վաճառե և ոչ գրավ դնե, վասնզի գիտեին, որ այլևս ոչ մի իր չեն կարող գրավից ազատել, և ինչ որ գրավումն է, արդեն կորած է:

Շատ-շատ մի-երկու ամիս ևս նա մի կերպ կկերակրե իր ընտանիքը: Հետո մթություն, խավար կամ մուրացկանություն, եթե որևէ հրաշք չպատահե:

Սակայն սոսկալի «հետոն» չէր այդ օրը Սիմոն Սեֆերյանին ալեկոծողը, այլ անցյալը: Ա՛հ, այն անցյալը, երբ նա հարուստ էր, անհոգ, հպարտ ինչպես գերիշխան: Երբ գաղափար անգամ չուներ մարդկային թշվառությունների մասին և չէր ուզում ունենալ:

Ինչո՞ւ նա այս սև օրին հասավ: Մնացյալները ոչինչ, ո՞վ գիտե, գուցե յուրաքանչյուրը նրանցից արժանի էր: Բայց ինքը, ո՞ր սխալի, ո՞ր մեղքի կամ ո՞ր հիմարության հետևանքով:

Նա չէր հավատում ոչ նախախնամության գոհությանը և ո՛չ դիպվածների զորությանը: նա իրեն տգետ չէր համարում, որովհետև տգետ էր: Այն մի քանի տարիները, որ անցուցել էր Գերմանիայում և այն մի քանի գրքերը, որ կարդացել էր երիտասարդ հասակում, ավելի էին թանձրացրել նրա բնական ինքնագոհությունը և ամբարտավանությունը: «Անուս» մարդկանց նա ծաղրում էր հավակնոտի հանդգնությամբ, լուսամիտների հետ վիճաբանում էր հեղինակավոր լեզվով: Եվ ոչ ոք չէր համարձակվում ցույց տալ նրան իր տգիտությունը, վասնզի հարուստ էր: Նրա միջավայրում հարուստներին չէին հակաճառում:

Հերքելով նախախնամության գոյությունը, նա իր խոշոր ադամանդով զարդարված ձեռքը զարկում էր մսալի ճակատին և կրկնում.

Կատարյալ մարդու աստվածն ահա այստեղ է: Երբեք նա իր ձեռը չէր զարկել սրտին: Երբեք նա չէր նայել դեպի իր ներքին աշխարհը քննական հայացքով, երբեք իր առանձնության մեջ չէր խոսել իր հոգու հետ: Չափազանց ամուր էր կառչած նրա միտքը շոշափելիին, նյութականին, որպեսզի կարողանար լուսո գեթ մի աղոտ շող ձգել հոգեկանի վրա: Մարդկային վշտերն ու տվայտանքները իրենց հազարավոր ձևերով ու գույներով շարեշար անցել էին նրա աչքերի առաջ

և առանց դիպչելու նրա հոգու որևէ թելին, սրտի որևէ լարին: Գրանիտյա ժայռ էր նա այն անհատակ օվկիանոսի ափին, որ կոչվում է կյանք, այնքան կարծր, որ ոչ մի ալեկոծություն չէր կարող նրան մաշել: Չկար նրա համար որևէ գրավիչ, որևէ հուզիչ բան, բացի այն բոլորից, որ կապ ունեին նրա անձնական երջանկության հետ: Նույնիսկ իր մերձավորների բախտը գնահատում էր իր անձի հանգստության չափով: Այսպես օրինակ, երբ նրա կինը կամ զավակները հիվանդանում էին, նա աշխատում էր տնից փախչել որևէ պատրվակով: Հիվանդը նրան անհանգստացնում էր:

Նա չէր կեղծում, երբ ասում էր, թե իր «խիղճը հանգիստ է», վասնզի չէր կարող հանգիստ չլինել, մի բան, որ խորին թմրության մեջ էր: նա ժպտում էր հեգնական հանգիստ ժպիտով, երբ իր մոտ խոսում էին կարեկցության կամ մարդասիրության մասին: Ծաղրելով զգայուն մարդկանց, համարելով նրանց «թուլամորթներ», նա ասում էր.

Մեր կյանքը կարճ է, ամեն մարդ ունի մի լուծ, որ մի կերպ տանում է, հիմարություն է ուսերի վրա վերցնել ուրիշների բեռը:

Ուրիշների մահը նրան ցավ չէր պատճառում, բայց իր կյանքի վախճանը սարսափեցնում էր նրան: Դա մի սոսկալի ուրվական էր, որ մերթ ընդ մերթ ծառանում էր նրա առջև, մանավանդ այն պահերին, երբ ինքն իրեն զգում էր երջանիկ: Երբ նրա մոտ որևէ մեկը խոսում էր առհասարակ մահվան մասին, նա շտապում էր խոսողի բերանը փակել, ասելով.

Ուրիշ նյութ չունե՞ս խոսելու, մահը զզվելի բան է:

Նրա ամբողջ էությունը, ամբողջ հոգին, նրա աստվածը, հավատը, ամեն ինչը, իր մարմինն էր: Այստեղ էր ամփոփված նրա համար ամբողջ տիեզերքը: Եվ այդ առողջ, պարարտ մարմինը նա սիրում էր ու փայփայում կանացի հոգածությամբ: Մի թեթև գլխացավ կամ ատամնացավ երկյուղ էր ներշնչում նրան և այդ պահերին ուզում էր, որ ամենքը զբաղվեն իրենով, ամենքը, նույնիսկ հեռավոր ծանոթները: Առանձնապես նրան մտատանջություն էր պատճառում իր առնական ընդունակությունը: Միգուցե մի օր զրկվե այդ ընդունակությունից, որ նրա սրբություն սրբոցն Էր, և շարունակ խորհրդակցում էր բժիշկների հետ . . .

⁂

Այսպես էր եղել Սիմոն Սեֆերյանն իր անցյալում: Այն մարդը, որ «այնտեղ», ոսկու և արծաթի ապականված ու նեխված աշխարհում, ոմանց առերես հարգանքի, ոմանց թաքուն ատելության և համենայն դեպս ընդհանուրի նախանձի առարկան էր: Այն մարդը, որ իրեն համարել էր ամենից զգաստը, ամենից խելոքը: Նա, որ իր ահագին հարստությամբ կարող էր հազարավոր չքավորների ու տնանկների ծանր լուծը թեթևացնել և սակայն ոչ մեկի արցունքը չէր սրբել:

Եվ ահա այսօր այդ անսասան մարդը, այդ պողպատյա եսամոլությունը խեղճացել էր, ընկճվել, կծկվել անողոք ճակատագրի հարվածների տակ: Գայլը զրկվել էր ատամներից և անզորությունից կրծոտում էր ներսը:

Արմունկները հենած սեղանի եզրին, ճաղատ գլուխը ձեռքերի մեջ բռնած, աչքերը հառած դիմացի պատին, նա խորհում էր: Օ՜հ, ոչ իր կորցրած հարստության, այն հոյակապ տների, առատաբուխ նավթահանքերի, գործարանների, շոգենավերի, այլ իր բարոյական աշխարհի մասին: Դա առաջինն էր իր հիսնամյա կյանքում, առաջինը, երբ նայում էր դեպի իր ներսը: Եվ որքան ավելի էր խորհում այնքան իր անցյալն ավելի ու ավելի էր թանձրանում իր ոչնչությամբ: Մեկը մյուսի ետևից նրա նոր բացվող աչքերի առջև անցնում էին իր կյանքի էտապները և դրա հետ միասին մարդկային թշվառությունների բոլոր տեսակները, որոնց երբևէ տեսել էր և որոնց վրա երբեք ուշադրություն չէ դարձրել: Ահա հանքերի և գործարանների, նավերի ու շինությունների, ծովերի ու ցամաքների կիսամերկ, կիսանոթի աշխատավորներ՝ նավթի ու մուրի, տգիտության ու կեղտերի մեջ, նիհար, հողագույն դեմքեր, քայքայված կամ պես-պես հիվանդություններից փտած մարմիններ: Մի խավար զանգված, որ նույնպես մարդկություն է: Այդ հազարավոր ամբոխը, հոգիների այդ վիթխարի լեգիոնը գիշեր-ցերեկ, անդուլ-անդադար աշխատել է մի փոր հացի համար և սակայն երբեք կուշտ չի եղել, որովհետև նրա դառն աշխատանքի, նրա արյուն-քրտինքի ամբողջ արդյունքը, այս ամբողջը կլանվել է մի քանի տասնյակ անհատների գրպանը: Մեկն էլ այդ անհատներից ինքն է եղել, Սիմոն Սեֆերյանը:

Քանի՛-քանի կորստաբեր դեպքեր են տեղի ունեցել նրա հանքերի վրա ու գործարաններում, քանի՛-քանի հանկարծահաս մահեր, գազերի մեջ խեղդվածներ, նավթի մեջ այրվածներ, փլված պատերի տակ ջարդվածներ: Եվ ո՞ր դժբախտությունն է նրա հոգին փոթորկել, ո՞րն է նրա կույր աչքերը թրջել:

«Շատ-շատ տալիս էի թշվառների թաղման ծախքը և մի քանի ոսկի էլ շպրտում էի նրանց ընտանիքներին»:

Եվ դրանով կատարած էր համարում իր մարդկային պարտականությունը:

«Եվ չէի ամաչում դեռ թշվառների դիակները չթաղված գնալ կլուբ, թուղթ խաղալ, հետո ընթրել, շամպայն լակել, հետո վազել սիրուհիներիս մոտ՝ այնտեղ կոկորդիլոսի արցունքներ թափելու»:

Արտասանելով այս խոսքերն իր մտքում, նա ձեռը զարկեց ճակատին և հառաչեց.

«Մեղք եմ փնտրում, շարունակեց մտածել նա, դառը ժպտալով, մեղքն ի՞նչ է, թշվառ, դու ոճրագործ ես...»:

Ամեն ինչ, ամեն ինչ գոռում ու աղաղակում էր նրա խղճի դեմ: Խղճի, որ նոր էր զարթնել, որ նոր էր ծնվել նրա մեջ, այն Ժամանակ, երբ նա անզոր էր իր անցյալը շտկելու: Պարզ և վառվռուն նա հիշեց և բանվորների ապարդյուն աղերսանքները՝ գեթ մի քանի կոպեկով ավելացնելու իրենց օրավարձը, և նրանց մութ ու խոնավ կացարանները, և նրանց զավակների կիսամերկ մարմինները կեղտերի մեջ, և տարափոխիկ հիվանդությունները, էլ ամառվա սառնամանիքը, և ամառվա դժոխային շոգերը, և գազերի հեղձուցիչ մթնոլորտը, և նավթի ու մուրի երկրային գեհենը: Հիշեց, ինչ արհամարհանքով ու ծաղրով մի օր ընդունեց «խեղճերի պատգամավորությունը», որ եկել էր աղերսելու «տե՛ր, օգնեցե՛ք մեզ, քեզ համար ենք աշխատում»: Նա պատասխանեց. «Եթե չեք հավանում, գնացեք ուրիշի մոտ աշխատեցեք»: Ո՞ւր գնային, ամենուրեք միևնույնն էր: Բայց չէ՞ որ նա իրեն ամենից խելոքն էր համարում: Ինչո՞ւ չկարողացավ հասկանալ, որ այդ սև ամբոխը նույնպես մարդկություն է:

Իր ագահության, քարասրտության, եսամոլության պատկերների մեջ առանձին ուժգնությամբ նրա հիշողության մեջ ծառացավ մեկը: Ինչո՞ւ այդ մեկը, նա ինքն էլ չգիտեր:

Նա ուներ մի գործակատար Մնացական անունով, որ երկար տարիներ ծառայել էր նրան, անշեղ հավատարմությամբ և իհարկե չէր վարձատրվել արդար չափով:

Հիշեց նրա կերպարանքը: Միջին տարիքի մարդ էր, բարձրահասակ, բայց թուլակազմ, նիհար: Նա կորացած ուռենու տպավորություն էր գործում իր ոսկրոտ մարմնով, երկայն, հնամաշ, աշնանային տերևի գույն ունեցող չուխայի մեջ: Կորամեջք էր, կոկորդի ոսկորը դուրս ցցված, երեսը չեչոտ էր և մի աչքը կույր, երևի ծաղկից:

Մի որ Մնացականը մտավ նրա գրասենյակը, սովորականից ավելի կոր մեջքով և գդակը ձեռքերի մեջ տրորելով, երկչոտ քայլերով մոտեցավ գրասեղանին:

Տե՛ր, ասաց նա, ես մի որդի ունեմ, գիմնազիոնի աշակերտ է: Նա իմ միակ ապավենն է: Հիվանդ է, կրծքի ցավ ունի: Բժիշկներն ասում են, եթե ես նրան այս ձմեռ մի տաք երկիր չուղարկեմ» կարող Է...

Մարդը չկարողացավ իր խոսքն ավարտել, նրա ձայնը խեղդվեց կոկորդում:

Նա եկել էր իր աներոջից մի գումար խնդրելու, ոչ իբրև ողորմություն, այլ պարտք իր ամսականից մաս-մաս վճարելու պայմանով:

«Ես մերժեցի նրան, ասաց իր մտքում Աեֆերյանը, ես չամաչեցի մերժել, որովհետև տրամադրությունը տեղը չէր»:

Մարդը ոչինչ չասաց, լուռ նայեց տիրոջ երեսին, և այդ պահին (օհ՛, այդ է, որ այսօր տանջում է Սեֆերյանին) նրա միակ աչքից դուրս ընկան արցունքի երկու խոշոր կաթիլներ և, իջնելով վար, կանգ առան նրա ծաղկատար այտի վրա:

Անցան շաբաթներ, թե, ամիսներ (լավ չի հիշում Սեֆերյանը): Մի օր նա շատ ուրախ տրամադրության մեջ էր: Նրա նոր հանքերի շրջանում շատրվան էր

բացվել, որ խոստանում էր նոր հարստություն: Այդ պահերին նա սովորաբար կատակներ էր անում ամենքի, նույնիսկ իր ստորադրյալների հետ: Ուզում էր, որ ամենքն ուրախանան, չէ՞ որ հարուստները չեն սիրում տխուր միջավայր: Նա չզրկեց և Մնացականին իր բարեհաճ ուշադրությունից: Հիշում է նա այսօր բուռ առ բուռ այն խոսքերը, որ ասաց մարդուն.

Է՛յ, ցի՛կլոպ, բավական է, որքան տեսար աշխարհի մի երեսը, այժմ նայիր մյուս կողմը:

Շու՛րջը լսող գործակատաքրներն ու ծառաները հրոհրո ծիծաղեցին իրենց տիրոջը հաճոյանալու համար, և տերը, կարծեց, որ իր կատակը մի մեծ սրախոսություն է:

Մնացականը ոչինչ չասաց, Սեֆերյանը զգաց, որ նա վիրավորվեց: Նա վախեցավ, որովհետև մարդն, իր մի աչքով նայեց նրան, այնպիսի ատելությամբ, որ, կարծես, պատրաստ էր կատակին պատասխանել մի սուր հայհոյանքով: Նա շտապեց իր սխալն ուղղել և ասաց.

Ա՛հ, միտս ընկավ, կարծեմ դու մի որդի ունեիր հիվանդ, ինչպե՞ս է այժմ:

Մարդը նորեն նայեց նրա երեսին, ավելի սուր ատելությամբ և պատասխանեց.

Նա մեռավ:

Ապա, բռունցքները սեղմելով իր կատաղությունը զսպելու համար՝ ավելացրեց.

Դու չկամեցար նրան ազատել. դու մարդասպան ես…

Ասաց և հեռացավ առանց ետ նայելու, հետևյալ օրը նա արձակվեց իր պաշտոնից: «Մարդասպան, մարդասպան», կրկնեց նա իր մտքում մի քանի անգամ,- ո՞վ գիտե քանի՛ քանիսին եմ մահ պատճառել անգիտակցաբար:

«Բայց ինչո՞ւ անգիտակցաբար», ավելացրեց նա իսկույն, չէ՞ որ ես ինձ խելոք մարդ էի համարում:

Եվ նա առաջին անգամ իր կյանքում սկսեց կասկածել իր խելքի մասին: Նա խոստովանեց ինքն իրեն, որ դրամ շահելու համար մեծ խելքի պետք չկա, և հիշեց մի քանի տասնյակ բթամիտներ, որ իր չափ հարուստ էին. «Այո՛, այո՛, եթե ես խելոք լինեի, կգուշակեի «այսօրվա օրը»:

Եվ շարունակեց խորհել միշտ գլուխը բռնած ձեռքերի մեջ: Մի անգամ սկսելով իր բարոյական աշխարհի վերլուծումը՝ այլևս պահանջ էր զգում ավելի ու ավելի առաջ երթալ, մղված ինչ-որ անդիմադրելի զորությունից: Ծանր էր իր համար բերել իր ախտերը, բայց և մոիչ: Ճահճի մեջ ընկած ճամփորդի պես նա քանի առաջանում էր, այնքան ավելի էր խորասուզվում տիղմի մեջ: Այո՛, տիղմ էր նրա բարոյական անցյալը, որքան պարսավելի ներկայացնում ինքն իրեն, այնքան ավելի էր հաշտվում իր այժմյան կացության հետ: Այն ժամանակ, երբ կատարվածը համարում էր «անիրավություն» և իր բախտակիցների հետ միաձայն անիծում էր ու շարունակ անիծում «նրանց», այդ ժամանակ նա տանջվում էր անհունապես: Այժմ զգում էր, որ այդ անիրավության մեջ կա ինչ-որ արդարություն, ինչ-որ արժանի հատուցում: Եվ նա, որ մինչև փորձանքը այնքան համարձակ, այնքան անվերապահ հերքել էր նախախնամության գոյությունը, այժմ հարցնում էր իրեն, արդյոք մոլորված չի՞ եղել, արդյոք այդ չի եղել այժմյան իր կացության պատճառների պատճառը: նա կարող էր իր հոգու խորքում չհավատալ գերբնականի գոյությանը, քի՞չ կան մարդիկ, որ նույնպես չեն հավատում, բայց ինչո՞ւ էր այնքան հանդգնաբար ծաղրում հավատացողներին, ինչո՞ւ էր անարգում անբացատրելին: Ա՛հ, ուզում էր ցույց տալ մարդկանց, թե ավելի գիտե, քան իր շրջապատողները:

Եվ նա սկսեց ամաչել իր անցյալ ինքնահավանությունից, իր ամբարտավանությունից:

Նա այնքան էր խորասուզված իր մտքերի մեջ, որ չնկատեց իր հայրենակիցներից երկուսի գալը: Ներս մտան այդ մարդիկ ծանր քայլերով, ինչպես թաղման հուղարկավորներ և, առանց բարևելու, լուռ նստեցին նրա մոտ աջ ու ձախ:

Այդ մարդիկ վաղուց էին միմյանց ձանձրացրել և վաղուց կկամենային փախչել իրարուց, բայց և այնպես, ամեն առավոտ, քնից զարթնելով, պահանջ էին զգում

միևնույն ժամադեպին գնալու: Էհ, ո՞վ գիտե, գուցե որևէ մեկը «այնտեղից» լուր ունե, միևնույնն է ուրախ, թե տխուր լուր: Նրանց զրույցների նյութերն արդեն սպառվել էին, և իրարու հանդիպելիս չգիտեին ինչով սկսել և ինչով վերջացնել տեսակցությունը: Երբեմն աշխատում էին զվարճանալ անեկդոտներով, բայց դրանք էլ սպառվել էին և հաճախ միևնույն անեկդոտը կրկնվում էր տասներորդ անգամ: Նույնիսկ ամենօրյա անեծքները չորացել էին նրանց շրթունքների վրա և այլևս չէին թեթևացնում նրանց մաղձը:

Ամենքը հավասար կացության մեջ էին: Մի կերպ քաշքշում էին իրենց ողորմելի գոյությունը, վաճառելով վերջին ունեցածը: Կեղծում էին ու ստում՝ իրենց միջոցները թաքցնելու համար և ողբում էին, շարունակ ողբում իրենց ճակատագիրը: Բայց ոչ մեկը չէր կարող մյուսին խաբել: Իրարու հոգեբանությունը ուսումնասիրել էին ինչպես միևնույն դասարանի աշակերտներ կամ միևնույն խմբի դերասաններ:

Ահա ինչու նորեկները, մի հայացք ձգելով Սեֆերյանի վրա, իսկույն դեմքերի շարժումով իրարու հասկացրին, որ մարդը իր սովորական տրամադրության մեջ չէ: Լռությունը տևեց բավական երկար Ժամանակ՝ մինչև որ նորեկները դատարկեցին իրենց սովորական բաժակը սուրճի:

Դե՛հ, ասաց վերջապես մեկը երկուսից, այժմ ասա՛, տեսնենք ի՞նչ նոր կարիճ է խայթել քեզ, Սիմոն, ինչո՞ւ այդպես այլայլված ես:

Սեֆերյանը ոչինչ չպատասխանեց: Արթնանալով մտքերից, նայեց աջ ու ձախ իր բախտակիցներին և զգաց մի անսովոր ատելություն դեպի այդ մարդիկ: Այժմ նրանք նույնն էին իր աչքում, ինչ որ ինքը, ավելի կամ պակաս ոճրագործներ, այո՛, կատարյալ ոճրագործներ, վասնզի իր համար ուրիշ անուն չէր գտնում:

Մի պահ նա պահանջ զգաց բարկանալու նրանց իր հոգին, արտահայտելու իր խոհերը, բայց զսպեց իրեն: Զսպեց ամոթից: Չէ՞ որ այդ մարդիկ, լավ են ճանաչում նրան, գիտեն, թե որքան է հպարտացել իր խելքով, իր իմաստությամբ: Ի՞նչ կասեն, եթե նա այժմ վեր կենա և հանկարծ խոստովանե, թե իր բոլոր սկզբունքները խախուտ են եղել, թե չարաչար մոլորվել է հերքելով նախախնամության գոյությունը, մարդասիրության զգացումը, տկարի իրավունքը

և զորավորի պատասխանատվությունը: Ինչ էլ ասելու լինեն՝ համենայն դեպս չպետք է հավատան նրա անկեղծությանը և պիտի ծաղրեն: Բայց ի՞նչ անել: Շարունակե՞լ ամենօրյա կեղծիքը, կատակերգությունը, սնոտի հույսերը գալիք «փոփոխությունների» մասին և անիծել, շարունակ, անիծել: Օ՜հ, ոչ, բավական է, որքան կրճտեց ատամներն անզորությունից: Կա այժմ մի բան, որի վրա պիտի հենվել ճշմարտությունը:

Այլևս չմնաց ուժ ո՛չ խաբելու և ո՛չ խաբվելու:

Ձգելով սեղանի վրա իր վճարելիքը, արագությամբ ոտքի ելավ:

Դու շտապո՞ւմ ես, բայց ո՞ւր, հարցրին նրա բախտակիցները միաժամանակ:

Չգիտեմ ուր, մնացեք բարով:

Ասաց և շտապով դուրս եկավ սրճարանից:

Սեղանակիցները նայեցին իրարու:

Այդ մարդը կարծես խելագարվում է, տեսա՞ր աչքերը ինչպես ծռեց մեզ վրա, ասաց մեկը երկուսից:

Այս՛, նկատեցի, զարմանալի չէ այդ դրության մեջ խելագարվելը, արտասանեց մյուսը անտարբեր:

Այդ օրից Սիմոն Սեֆերյանը այլևս չէր երևում ո՛չ մի տեղ: Մեկը նրա մոտիկ բարեկամներից այցելեց նրան իր բնակարանում մի երեկո և հետևյալ օրը սրճարանում ասաց.

Սիմոնը մի գործարան է մտել իբրև հասարակ բանվոր: